ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 18 օգոստոսի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի
Անդամակցությամբ՝ Ռ. Պապայանի
Հ. Դանիելյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Գոհար Մարկոսյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Գոհար Մարկոսյանը 2010թ. հուլիսի 27-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229 եւ 233-րդ հոդվածների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 3-րդ, 8-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածների եւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ եւ 5-րդ կետերի պահանջներին:

Տվյալ անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներով հիմնավորված է, որ սույն դիմումն ակնհայտ անհիմն է, քանի որ դիմողն իր պահանջները հիմնավորող որեւէ փաստարկ չի ներկայացնում, այլ հիմնական շեշտը դնում է գործի փաստական հանգամանքների վրա, այնինչ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների՝ դիմողը պետք է ներկայացնի անհրաժեշտ հիմնավորումներ՝ վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ:

Բացի այդ, հարկ ենք համարում նշել, որ Սահմանադրական դատարանը իր ՍԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է հայտնել, որ եթե դիմողի կողմից չի հիմնավորվում վիճարկվող դրույթի եւ իր իրավունքների ենթադրյալ խախտման փաստի միջեւ պատճառահետեւանքային կապը, ապա տվյալ դիմումն ակնհայտ անհիմն է:

Դիմողը պատշաճ չի հիմնավորել նաեւ իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ սահմանադրաիրավական վեճի առարկա հանդիսացող դրույթի միջեւ պատճառահետեւանքային կապի անմիջական առկայությունը:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին եւ 6-րդ կետերով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Գոհար Մարկոսյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

18 օգոստոսի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/2-27